

լոր կերողաց, ինչպէս մկրտութեան ջուրը կամ մեռոնն իրենց մերձեցողաց: Բարին այլ եւս զործը չէ, այլ նիւթն իսկ: Ինչ բան կայ աւելի հեղինակաւոր՝ քան ասորով հայ եկեղեցւոյ ընդունած ու բոլոր դարերու մէջ գործածած Մաշտոցը: Եւ ահա սա է՝ որ կը հաստատէ այս գաղափարը, առաջին շրջանէն բովանդակութեամբ՝ ուստի եւ գոյութեամբ ալ հեռի ազդեցից մէջ մաղթելով անասնոյն տրուելի աղին վրայ, որպէս զի « եղիցի մեզ ի սրբորթիւն քառորթեան եւ ի քորթիւն մեղաց » (աստ, 347). նոյնպէս պատարագի հատին վրայ, թէ « շնորհեա ամենեցուն որք հարորդիս ի ամսնէ՝ գիրկորթիւն առողջութեան կենաց եւ քառորթեան մեղաց » (362). կամ թէ նոյն ճաշակողաց « եղիցի ի սրբորթիւն եւ ի քառորթիւն մեղաց, ի կենդանութիւն եւ ի վրկորթիւն անձանց » (332). շատ անզգոյշ բացատրութիւնք, որոց մէջ ակներեւ է մատաղին տրուած չափազանց եւ թիւր նշանակութիւնը, եւ կ'արգարացնեն սուտ Դամասկացւոյն գայթակղութիւնը (աստ, 378), որ ուրիշ տեղ մ'ալ կը կրկնէ՝ թէ Հայք զենեալն ու տելով՝ « այնիւ ասեն ունել զքորթիւն մեղաց կենդանեաց եւ մեռելոց » (Լոյս, 1905, էջ 1114):